

Թիւ 27248
Մարտ 17, 1981

Արժանաշնորհ
Տ. Վրթանէս Քհնյ. Գալայճեան
Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Ուղղորդիչ Տի. Սի.

Սիրելի Տէր Վրթանէս,

Ստացած ենք Մարտ 6, 1981 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար Ցին գումարուած համայնքիդ ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժիական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, ինչպէս նաեւ համայնքիդ նորընտիր իւրաքանչիւր պատգամաւորի ինքնութիւնը հաստատող վկայագիրը, որուն օրինակը կը ներփակենք:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ
Առաջնորդ

Նորիկ Ասպէտ
Տոբթ. Հարրի Պէյբըր
Պերմ Գուզէյեան
Տոբթ. Հտուրտ Օնանեան
Մայք Թաշճեան
Սարգիս Սաթեան